«ՈՒՍՏՐ ՄԱՄԻԿՈՆ» ՍՊԸ-ի գույքի աճուրդի կազմակերպման և անցկացման մասին

2026-11-12 09:29:54

Հայտատու	Ֆիզիկական անձինք
Տեսակ	Աճուրդների մասին հրապարակային ծանուցումներ
Հիմք	Սնանկության մասին ՀՀ օրենքի 76-րդ հոդված

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
Աճուրդի կազմակերպման և անցկացման մասին

Սնանկ ճանաչված <<ՈՒՍՏՐ ՄԱՄԻԿՈՆ >> ՍՊԸ-ի (ՍՆԴ /1410/04/19) սեփականությունը հանդիսացող և << ԱՄԻՕ ԲԱՆԿ >> ՓԲԸ-ում գրավադրված երրորդ անձին պատկանող թեթև մարդատար տրանսպորտային միջոցների հրապարակային 2026թ.նոյեմբերի 30-ին, ժամը 14:00-ին սակարկությամբ աճուրդով վաճառք կազմակերպելու և անցկացման մասին:

2026թ. հունիսի 30-ին, ժամը 15:00-ին, նշանակված աճուրդը չի կայացել հայտեր չլինելու պատճառով: 2026թ, հուլիսի 20-ին, ժամը 15:00-ին, 2026թ.օգոստոսի 28-ին, ժամը 14:00-ին կայացած կրկնաճուրդները հայտարարվել են չեղյալ: 2026թ.հոկտեմբերի 07-ին, ժամը 14:00-ին, նշանակված կրկնաճուրդը չի կայացել հայտեր չլինելու պատճառով: 2026թ.նոյեմբերի 02-ին, ժամը 14:00-ին նշանակված թվով երրորդ աճուրդը չի կայացել հայտեր չլինելու պատճառով: Տեղեկացնում եմ, որ 2026թ.նոյեմբերի 30-ին, ժամը 14:00-ին կանցկացվի նշանակված թվով չորրորդ աճուրդը: Երևան,Նոր Նորքի 9-րդ զանգված Վիլնյուսի փողոց 79 շենք, 14 բն.
հասցեում կկայանա
«ՈՒՍՏՐ ՄԱՄԻԿՈՆ» ՍՊ ընկերության պարտավորությունների կատարման ապահովման նպատակով «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ-ում (այժմ՝ «ԱՄԻՕ ԲԱՆԿ» ՓԲԸ) գրավադրված, երրորդ անձին պատկանող, թեթև մարդատար մեկ տրանսպորտային միջոցը, և «ՈՒՍՏՐ ՄԱՄԻԿՈՆ» ՍՊԸ-ին սեփականության իրավունքով պատկանող թեթև մարդատար մեկ տրանսպորտային միջոցների հրապարակային սակարկությամբ աճուրդով վաճառքը, բաց, դասական եղանակով, 2 առանձին լոտերով, ներքոնշված մեկնարկային գներով.

ԼՈՏ 1. . «MERSEDES-BENZ» մակնիշի, S550 տիպարի, 70DD007 հաշվառման

համարանիշով, WDD2221851A056407 նույնականացման համարով, թողարկման տարեթիվը՝ 2014թ., թափքի տեսակը՝ Սեդան, գույնը՝ սև, վազքը կազմում է 120.000 կմ, շարժիչի հզորությունը՝330/455 ԿՎ/Ձուժ, սրահը կաշվով երեսապատված, շարժիչը՝ բենզինային, գտնվում է անսարք վիճակում, ընդհանուր գնահատմամբ տրանսպորտային միջոցը գտնվում է վատ վիճակում։
Աճուրդի մեկնարկային գինը առաջարկվում է՝ 3.328.000 ՀՀ դրամ։

ԼՈՏ 2. . ԳԱԶ(ГАЗ) մակնիշի, 311000 տիպարի, XTH31100021119905 նույնականացման համարով, թողարկման տարեթիվ՝ 2002թ., թափքի տեսակը՝,Սեդան, գույնը՝ Ավանտյուրա(սև), շարժիչի հզորություն՝ 81/110 ԿՎ/Ձուժ, հաշվառման համարանիշը՝ 006 US 06, սրահը՝ կտորով երեսապատված, գտնվում է մաշված վիճակում, շարժիչը՝ բենզինային, տրանսպորտային միջոցը գտնվում է վատ վիճակում։
Աճուրդի մեկնարկային գինը առաջարկվում է՝ 235.520 ՀՀ դրամ։

Աճուրդին մասնակցել ցանկացողներն սույն հայտարարության հրապարակման օրվանից հետո, բայց ոչ ուշ, քան աճուրդի անցկացման օրվանից հինգ աշխատանքային օր առաջ, պետք է հայտ ներկայացնեն ՀՀ սնանկության դատարան, ք. Երևան, Օտյան փող., շ. 53/2 հասցեով։
Հայտին կից պետք է ներկայացնել աճուրդի մասնակցության վճարի և նախավճարի վճարումը հավաստող փաստաթղթերը, ինչպես նաև՝ ֆիզիկական անձանց դեպքում՝ անձնագրի պատճենը, իսկ իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի դեպքում՝ դրանց պետական գրանցումը հավաստող փաստաթղթերի պատճենները։
Մասնակցության վճարը և նախավճարը կազմում են տվյալ լոտի մեկնարկային գնի 1 և 5 տոկոսը, որոնք պետք է, մինչև աճուրդի, բայց ոչ ուշ, քան աճուրդի անցկացման օրվանից հինգ աշխատանքային օր առաջ, վճարվեն փոխանցումով *ՎՏԲ-Հայաստան Բանկ* ՓԲԸ-ի “Նորք” մասնաճյուղում Յուրիկ Վազգենի Օհանյանի / <<«ՈՒՍՏՐ ՄԱՄԻԿՈՆ >> ՍՊԸ-ի համար/ անվամբ բացված սնանկության թիվ 16075034719914 հատուկ հաշվեհամարին։
Աճուրդում հաղթող է համարվում ամենաբարձր գին առաջարկած մասնակիցը։ Միաժամանակ տեղեկացվում է, որ աճուրդով վաճառվող գույքի վաճառքի, նոտարական վավերացման և պետական գրանցման հետ կապված ծախսերը կատարվում են գնորդի կողմից։
Աճուրդում հաղթած անձը պարտավոր է աճուրդն անցկացնելու օրվանից 10 օրվա ընթացքում սնանկության հատուկ հաշվին մուծել այն գումարը, որով գնել է գույքը /գնման գինը/, հաշվանցելով նախօրոք մուծված նախավճարը։
Լոտերն ուսումնասիրելու, ինչպես նաև աճուրդի կանոնակարգին ծանոթանալու համար ցանկացողները կարող են դիմել սնանկության գործով կառավարիչ Յուրիկ

Օհանյանին /հեռ. Հեռ,՝ (091) 89 04 77 /, (093) 30 25 33 /:

37491890477

yurik.ohanyan1943@mail.ru

-Ք. Երևան, Վիլնյուսի փող., 79 շենք, բն. 14